ՎԱԽՃԱՆՎԵՑ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԸ

2005 թ. ապրիլի 3-ին, կյանքի 85–րդ տարում, վախճանվեց Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապը՝ թողնելով ավելի քան 26 տարիների հսկայական մի ժառանգություն:

Ով էր Հովհաննես-Պողոս Բ Պապը: Կարդինալ Յոզեֆ Ռացինգերը որպես Պապ իր անդրանիկ խոսքում Հովհաննես-Պողոս Բ-ին բնորոշեց «Մեծ» փիփղոսով:

Հռոմեական Եկեղեցու այս խոշոր գահակալը իրապես էր կրում այդ «Մեծ» փիփղոսը: Հաղթահարելով անցյալի հակամարտություններով պայմանավորված դժվարությունները՝ նա կարողացավ ճանապարհորդել աշխարհով մեկ, տարածել սեր և եղբայրություն ինչպես քրիստոնյաների, այնպես էլ այլ կրոնների ներկայացուցիչների միջև:

Հոգևոր, ընկերային, քաղաքական բնագավառներում Հովհաննես-Պողոս Բ-ի հսկայական գործունեության շնորհիվ Կաթոլիկ Եկեղեցին առավել զարկ տվեց միջեկեղեցական հարաբերություններին: Երկխոսության ջատագով այս Պապը պատմության մեջ մտավ նաև որպես հայ ժողովրդի բարեկամ՝ 2001 թ. այցելելով Ս. Էջմիածին ու դատապարտելով Հայոց ցեղասպանությունը: Նա միակ Պապն է, որ այցելել է Հայաստան, և որի այցելությունը էկումենիկ էր և ոչ թե հովվապետական: